ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021 թվականի N 46– Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ին կայացած նիստի N 8 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Արտակ Արմենի Ղազարյանի, Մանվել Արսենի Մանուչարյանի և Սոս Արմենի Սարգսյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով փոխանցել՝ 317 /երեք հարյուր տասնյոթ/ հազար դրամ <<Եդեմ 1>> ՍՊԸ-ին և 80 /ութսուն/ հազար դրամ <<Հայկ Սարդարյան>> ԱՁ-ին:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *07811824* ՀՐԱԶԴԱՆ ՀԱՐՈՒՆՅԱՆ

22.02.2021

X

2021թ. փետրվարի 22
ք.Իջևան